«Հաստատում եմ»
Հայաստանի շախմատի Ֆեդերացիայի
գործադիր տնօրեն՝ Ա. Գևորգյան
«30» հոկտեմբեր 2025 թ.

ՀՀ կանանց 2026թ. առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անցկացման վայրը՝ ք. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա (Շևչենկո 34)

Ժամկետները՝ օգոստոսի 22-30

Մասնակիցները՝ մասնակցության իրավունք ունեն երկրորդ, առաջին կարգային և մինչև 2001 ազգային վարկանիշ ունեցող շախմատիստուհիները:

Մրցակարգը՝ շվեյցարական մրցակարգ 9 տուր

Ժամակարգը՝ 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով:

1-10-րդ տեղեր գրված շախմատիստուհիները իրավունք կստանան մասնակցելու Հայաստանի 2026թ. կանանց առաջնության՝ առաջին խմբի մրցաշարին:

Խաղից ուշանալու թույլատրելի ժամանակը սահմանվում է 30 րոպե՝ խաղափուլը սկսելու պահից:

Լրացուցիչ ցուցանիշներ՝ հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը

որոշվում են ըստ.

1. հատված Բուխհոլց-1 ցուցանիշի,

2. Բուխհոլցի

3. սև գույնով խաղացած պարտիաների առավելագույն թվի:

Մրցաշարի ընթացքում մարզերը (30կմ և ավել) ներկայացնող բժշկի սննդի, մրցավարների սննդի և գիշերակացի ֆինանսավորումը կատարվում է

ԿԳՄՍ «Պետական աջակցություն մարզական ֆեդերացիաներին» ֆինանսական միջոցների հաշվին:

Մրցաշարի ընթացքում մարզերը ներկայացնող մարզիկների սննդի, գիշերավարձի ու ճանապարհածախսի, ինչպես նաև ուղեկցող մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Խաղացանկ

22.08.2025 1-ին խաղափուլ 11:00

23.08.2025 2-րդ խաղափուլ 11:00

24.08.2025 3-րդ խաղափուլ 11:00

25.08.2025 4-րդ խաղափուլ 11:00

26.08.2025 5-րդ խաղափուլ 11:00

27.08.2025 6-րդ խաղափուլ 11:00

28.08.2025 7-րդ խաղափուլ 11:00

29.08.2025 8-րդ խաղափուլ 11:00

30.08.2025 9-րդ խաղափուլ 11:00

Գրանցման համար անցնել հետևյալ հղումով՝

https://forms.gle/4Xf51ru4m1XXdBr46

Անհրաժեշտության դեպքում զանգահարել՝ +374 99 017 928 (WhatsApp, Viber)